Լեւոն յիւրայոցն՝ զփեսայն իւր Հեթում Սասնեցի[42], հանդերձ այլովք: Իբրեւ մերձ եղեն ’ի քաղաքն՝ պատուիրեաց սա պատգամաւորաց Բրնձին՝ երթալ յառաջագոյն հաւանեցուցանել զքաղաքացիսն, զի բերցեն առ ինքն զբանալիս քաղաքին եւ զբերդին եւ զայլոց մերձակայ ամրոցաց, եւ ապա թէ ինքն մտցէ ’ի ներքս. եւ եկաց մնաց յանուանեալ տեղւոջն *Ս. Յուլիան.* բայց զմի ’ի զինակրացն առաքեաց երթալ գիտել զի՛նչ լինիցի, եւ եթէ տայցեն ինչ նմա՝ բերել: Երթեալ սորա մերձ ’ի դուռն քաղաքին՝ ետես մատուռն մի՝ զոր էր շինեալ հօր Բրնձին՝ ’ի պատիւ Ս. Իլարիոսի պաշտպանի հայրենեաց իւրոց Բուադիէի. եհարց, թէ զի՞նչ եւ ո՞յր իցէ այդ. եւ յասել ոմանց զինչ էրն, նա գռեհկաբար, թերեւս եւ լուտանօք, Չգիտեմք, ասէ, ո՛ իցէ Իլարիոսդ, այլ մեք կնքեսցուք զդա յանուն Սրբոյն Սարգսի: Ձկծեցան որք լուանն՝ յարհամարհանացն, մանաւանդ զի լուեալ եւս էր զկալանաւորել իշխանին իւրեանց, եւ մորմոքէին յոգիս իւրեանց. անդ գրաստապան ոմն մրմռեալ մեծաւ սրտմտութեամբ՝ սկսաւ կշտամբել զորս անդն կային, զի հանդուրժէին լսել բանս այդպիսիս, եւ վատութեամբ լքեալ զտէրն իւրեանց՝ մատնէին զքաղաքն ’ի ձեռս արանց վատաց. եւ առեալ վէմ մի եհար զզինակիրն եւ տապալեաց յերկիր: Զայն տեսեալ ընկերաց նորա Հայոց՝ որք առ դրան կամրջի քաղաքին կային՝ աղմկեալ զաղաղակ բարձին. ընթացան անդր պահապանք դրանն եւ այլք բազումք ’ի ներքուստ անտի, եւ կալան զՀայ որեարն. ձայն ետուն ’ի քաղաքն համօրէն, խմբեցան ’ի մեծ եկեղեցին Ս. Պետրոսի, հանդերձ պատրիարքաւն. եւ խորհուրդ արարեալ հաստատեցին կարգել զՌեմունդ՝ զանդրանիկ Բրնձին իւրեանց՝ իշխան, մինչեւ արձակեսցի հայր նորա: Զգացեալ Հեթմոյ զշշուկն եւ զհակառակութիւն Անտիոքեցեաց, եւ երկուցեալ թէ գուցէ հորդան տուեալ եւ զինքն ձերբակալ արասցեն, փութացաւ որովք ընդ իւրն էին՝ դառնալ գոյժ արկանել Լեւոնի ’ի Կաստոն բերդ: Տեսեալ եւ սորա զի վրիպեցաւ պատեհ տիրանալոյ քաղաքին, զտէր նորին զոր ’ի բռին ունէր՝ եւ զորս ընդ նմա, առեալ զգուշութեամբ եբեր յերկիր իւր եւ արկ ’ի դիպահոջ ’ի կլայն Սսոյ, եւ պահէր պատուով տարեւոր ժամանակաւ. ակն ունելով կամ խոնարհեցուցանել զԱնտիոքացիս, կամ գերագոյն

---

[42] Յայտ ուրեմն է աստի զի դէպքս այս եղեն ’ի գարնայնի 1193 ամին, եւ ոչ յամի 1194, որպէս շատք ’ի նոր պատմչաց ասեն. քանզի ստուգիւ գիտեմք յայսմ 1193 ամի վախճանեալ զԳր. կաթողիկոս Տղայ, ’ի կէս կամ ’ի յետին կէս մայիս ամսոյ, եւ մինչ չեւ անցեալ ամսոյ միոյ՝ մեռան եւ Հեթում եւ եղբայր իւր: